Գ-31

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱ ՍՊԱՐՏԱԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 1920-1990 ԱԿԱՆ ԹԹ.

Է.00.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2005

Ատենախոսության թեման հաստատվել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետի ընդհանուր պատմության ամբիոնում:

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս , պրոֆեսոր

Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու,

դոցենտ

Հ. Ս. ԿՈՐԽՄԱԶՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2005թ. փետրվարի 24-ին, ժամը 14-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի 006 Մասնագիտական խորհրդում /հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24գ./:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2005թ. հունվարի 22-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար Պ. ՉՈԲԱՆՅԱՆ

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

<u>Թեմայի արդիականությունը:</u> Սևծովյան նեղուցների խնդիրը և անցյալում, և հիմա մնում է տերությունների միջև բազմաշերտ հակասությունների և պայքարի մի եզակի դաշտ: Դրա ուսումնասիրությունն ունի գիտական, քաղաքական և գործնական աներկբա կարևորություն:

20-րդ դարի յուրաքանչյուր խոշոր պատերազմ կամ հակամարտություն կարևոր փուլ է հանդիսացել նաև Թուրքիայի պատմության մեջ և որպես կանոն կարևորվել է սևծովյան նեղուցների հիմնախնդիրը:

Արդեն իսկ երկու համաշխարհային պատերազմների փորձը վկայում է, որ Նեղուցների նկատմամբ վերահսկողությունն ու գերիշխանությունն չի հանդիսանում հաղթանակի գրավական և որ դա ռազմական, քաղաքական և տնտեսական գործոններից կազմված այն ահռելի համալիրի բաղադրիչնորից միայն մեկն է: Այդուհանդերձ, 1970-1980-ական եւ 1990-ական թթ. զարգացումներն ակնհայտորեն վեր հանեցին այն իրողությունը, որ մեր օրերում ևս Նեղուցները պահպանում են իրենց ծայրահեղ կարևորությունը՝ մնալով տերությունների պայքարի թատերաբեմ:

Սառը պատերազմի ժամանակահատվածում և դրանից հետո դրսևորվեց մի յուրահատուկ երևույթ. Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամի իր պարտավորությունները հաջողությամբ համատեղում է Սևծովյան նեղուցների խնդրում ԽՍՀՄ-ի, այնուհետև նրա ժառանգորդ Ռուսաստանի շահերը հաշվի առնելու հետ: Եվ Թուրքիայի 1980-90ական թթ. միակողմանի նախաձեռնությամբ առկա փոփոխությունները գնահատվում են հիմնականում Մոնտրեի կոնվենցիայի շրջանակներում, իբրև դրա դրույթներին լրջորեն չվնասող քայլեր:

Սևծովյան նեղուցներով նավագնացության ծավալներն աճել են, համապատասխանաբար ավելացել է և Նեղուցների նշանակությունը և այն կարևորությունը, որ տրվել է վերջինիս այս խնդրում շահեր ունեցող երկրների կողմից:

<u>Աշխատանքի նպատակներն ու խնդիրները:</u> Ուսումնասիրության թեման ընտրելիս ատենախոսության հեղինակի նպատակն է եղել Սևծովյան նեղուցների խնդրի էության և պատմության լուսաբանումը, որին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

-լուսաբանել Սևծովյան նեղուցների խնդրի քննարկման այս կամ այն փուլում ակտիվ դեր խաղացած և նեղուցներով շահագրգռված մեծ տերությունների (Անգլիա, ԽՍՀՄ, Ռուսաստան, Միացյալ Նահանգներ և այլն) խաղացած դերը. նրանք այժմ էլ աշխարհաքաղաքական հետաքրքրություններ ունեն այս գոտում,

-վեր հանել հիշյալ խնդրի դերն Անգլիայի, ԽՍՀՄ-ի և նրա ժառանգորդ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների ռազմավարական նպատակների ու խնդիրների համատեքստում,

-քննական վերլուծության ենթարկել Նեղուցների խնդրի համատեքստում Թուրքիայի քաղաքական հաշվարկները՝ ցույց տալով, որ այն, որպես կանոն, հարկադրված էր գնալ փոխզիջման, հաշվի առնելով մեծ տերությունների միջև ստեղծված ուժերի հավասարակշռությունը,

-քննարկել Պոտսդամի կոնֆերանսում Նեղուցների խնդրի շուրջ ստեղծված իրավիճակը, վեր հանելով Մոնտրեի կոնվենցիան վերանայելու որոշման չիրագործման պատճառները,

-ներկայացնել Նեղուցների քննարկման հիմնական փուլերը, դրանց առանձնահատկությունները,

-լուսաբանել Նեղուցների կարգավիճակի և Կասպից ծովի էներգակիրների փոխադրման խնդրի միջև ներկայումս առկա ակնհայտ կապը,

-դիտարկել Նեղուցների խնդրում Թուրքիայի, արևմտյան երկրների, ԽՍՀՄ-ի և նրա ժառանգորդ Ռուսաստանի մոտեցումների էվոլյուցիան և դիրքորոշումների տրամաբանությունը:

<u>Աշխատանքի գիտական նորույթը:</u> Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ, ծավալով և հարցադրումներով առաջին փորձն է հայ արևելագիտության մեջ՝ անդրադառնալ Նեղուցների խնդրի էվոլյուցիային: Աշխատանքը արժևորվում է խնդրո առարկա գիտական թեմայի նորովի մեկնության փորձով.

-Աշխատության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Նեղուցների միջազգային հանձնաժողովի 1925 - 1936 թթ. Ազգերի Լիգայի Խորհրդին ներկայացվող տարեկան զեկուցագրերը: Դրանց հիման վրա ներկայացվում են Հանձնաժողովի ընդհանուր գործունեությունը, նրա և թուրքական կառավարության հարաբերություններում տեղ գտած բարդությունները:

-Եթե մինչ օրս Նեղուցների խնդրին նվիրված աշխատություններում փորձ էր արվում այն դիտարկել միայն 20-րդ դարի առաջին կեսի պատմության համատեքստում (հաճախ միակողմանիորեն, քանի որ դրանք որպես կանոն կրում էին սառը պատերազմի կնիքը), ապա մեր խնդիրն է ընդլայնել գիտախնդրի շրջանակները՝ ընդգրկելով զարգացումների ամբողջ ընթացքը 1920-1990-ական թթ.:

-Նեղուցների խնդրին նվիրված աշխատությունների մեծագույն մասը խոցելի էր հատկապես այն իմաստով, որ թուրք հեղինակների աշխատությունները, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով գրեթե լիովին անտեսվում էին, ինչը հնարավորություն չէր տալիս ներկայացնելու թուրքական տեսակետը: Ներկա աշխատության մեջ փորձ է արվում մասամբ լրացնելու այդ բացը՝ ներկայացնելով թուրք հեղինակների (թուրքերեն և եվրոպական լեզուներով) տպագրված աշխատությունները: Դրանք արժևորվում են ոչ միայն պատմության, այլև միջազգային իրավունքի տեսանկյունից, և հնարավոր է դառնում ներկայացնելու նոր փաստեր ու մոտեցումներ: Այս տեսանկյունից, ատենախոսության մեջ առաջին անգամ է ներկայացվում նեղուցների վերաբերյալ Լոզանի կոնվենցիան վերանայելու հարցում Աթաթյուրքի զգուշավոր դիրքորոշումը եւ թուրքական տեսակետի ձեւավորման պատմությունը, ինչը հնարավորություն է տալիս ըմբռնելու ընդհանրապես քեմալական Թուրքիայում կարեւորագույն քաղաքական որոշումների կայացման «խոհանոցը»:

<u>Աշխատանքի ժամանակագրական սահմանները:</u> Ատենախոսության գիտաթեման ուսումնասիրված է պատմական տևական համընթացի հետնախորքում՝ Փարիզի հաշտության կոնֆերանսից (1919-1920թթ.) մինչև 20-րդ դարի վերջին տասնամյակը: Ընդսմին, նպատակ է դրվել ժամանակահատվածը ներկայացնել և վերլուծել դարակազմիկ իրադարձությունների հոլովույթում, երբ փոխվում էր երկրների արտաքին քաղաքական կուրսը և մշակվում էր նոր քաղաքականություն:

<u>Աղբյուրների և գիտական գրականության տեսությունը:</u> Օգտագործվել են թեմային առնչվող սկզբնաղբյուրներ և մասնագիտական գրականություն հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով:

Ատենախոսության շրջանակներում լայնորեն օգտագործվել են Ռուսաստանյան Ֆեդերացիայի Արտաքին Քաղաքականության Արխիվի որոշակի փաստաթղթեր:[1]

[1] Архив Внешней Политики РФ.

Գիտական շրջանառության մեջ են դրվել նորահայտ արխիվային նյութեր, որոնք նախկինում շրջանցվել էին:

Թեմային առնչվող հայերեն լեզվով աղբյուրներն սակավաթիվ են և ներկա աշխատության շրջանակներում բացառապես օգտվել ենք 1989 թ. Երևանում հրատարակված «Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17-օգոստոսի 2)» փաստաթղթերի ժողովածուից:[2] Թեև այս սկզբնաղբյուրն 1984 թ. Մոսկվայում հրատարակված[3] համանուն ժողովածուի թարգմանված տարբերակն է, սակայն Պոտսդամի կոնֆերանսի քննարկումների լուսաբանման ընթացքում և մեջբերումներ կատարելիս մենք գերազանցապես հենվել ենք հայերեն տարբերակի վրա՝ մեջբերումների անհամապատասխանություններից խուսափելու նպատակով:

Օգտագործված արևմտյան աղբյուրների շարքում առաջին հերթին հիշատակման են արժանի Մոնտրեի կոնֆերանսի արձանագրությունները:[4] Այս պաշտոնական հրատարակությունը, որը հայտնի է նաև իբրև «Կարմիր գիրք», իր կազմվելու մեթոդի տեսանկյունից գրեթե չի տարբերվում իր նախորդից՝ «Դեղին գրքից»՝ Լոզանի կոնֆերանսի արձանագրություններից:[5] Այս երկուսի հրատարակման ընթացքում խմբագիրներն առաջնորդվել են ճիշտ այն նույն սկզբունքով, որով հետագայում պետք է առաջնորդվեին և 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսի արձանագրությունների[6] հրատարակման ընթացքում: Խնդիրն այն է, որ չնայած քննարկվող հարցերի կարևորությանը, դրանց հաշվետվությունը հանդիսացող հրատարակությունները միանգամայն անկատար են գիտական տեսանկյունից: Լիարժեք և ճշգրիտ սղագրությունների բացակայությունը, թերևս լուրջ բացթողում է: Այսպես 1919 թ. Փարիզի կոնֆերանսի ընթացքում սղագրություններ չէին արվում, իսկ կոնֆերանսի քարտուղարական գրառումները կցկտուր էին և ունեին էական բացթողումներ: Մոնտրեի կոնֆերանսի արձանագրությունները, թեև անհամեմատ ավելի լիարժեք ու ամբողջական են, այդուհանդերձ, հիմնականում ընդգրկում են ոչ

[2] Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17 - օգոստոս 2). Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1989

[3] Советский Союз на международных конференциях периода Великой отечественной войны 1941 – 1945 г. Сборник документов. –Т. VI. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР и Великобритании (17 июля – 2 августа 1945 г.). – Москва, 1984

[4] Actes de la Conférence de Montreux (concernant le régime des Détroits), 22 juin – 20 juillet 1936. Compte rendu des séances plénières et procés – verbal des débats du Comité technique. – Liège, 1936

[5] Conférence de Lausanne. T. I, novembre 1922 – 1 février 1923. T. II, 1 février 1923 – 4 février 1923. France. Ministère des affaires étrangères. Documents diplomatiques. Paris 1923

[6] Papers relating to the foreign relations of the USA. The Paris Peace Conference. Washington, 1942 - 1947

այնքան արձանագրությունները, որքան պարզ քարտուղարական գրառումները: Հիշյալ իրողությունը որոշակիորեն դժվարացնում է նշված կոնֆերանսների աշխատանքի ուսումնասիրումը: Նման պայմաններում մեր կողմից ավելի կարևորվել է տարբեր երկրների և մամուլի տարբեր ուղղությունների այն հրապարակումների ուսումնասիրումը, որ վերաբերում էին Մոնտրեի կոնֆերանսի և կոնֆերանսին նախորդած ու հաջորդած ժամանակաշրջանին:

Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել են բրիտանական սկզբնաղբյուրներն՝ ի դեմս «Բրիտանական արտաքին քաղաքականության փաստաթղթերը» ժողովածուն:[7]

Անգլերեն լեզվով օգտագործված աղբյուրների շարքում իր ուրույն տեղն ունի «Դիվանագիտությունը Մերձավոր և Միջին Արևելքում 1914-1956թթ.» փաստաթղթերի ժողովածուն՝ Ջ. Ս. Հուրովիցի խմբագրությամբ:[8] Այս ժողովածուի արժեքը կարևորվում է նրանով, որ յուրաքանչյուր փաստաթուղթ մեջբերելուց առաջ տրվում է դրա համառոտ նախապատմությունը:

Քանի որ տվյալ ժամանակաշրջանին վերաբերող թուրքական արխիվային փաստաթղթերի շարքը դեռևս տպագրված չէ, այդ բացը ձգտել ենք լրացնել թուրքերեն լեզվով տպագրված այլ կարևոր փաստաթղթերի ժողովածուների նյութերն ընդգրկելով: Աշխատանքի ընթացքում օգտագործվել են «Թուրքիայի քաղաքական համաձայնագրերը պատմություններով և բացահայտումներով (պարզաբանումներով) հանդերձ» ժողովածուի I հատորը՝ Իսմայիլ Սոյսալի խմբագրությամբ, որ ներառում է 1920-1945 թթ. ժամանակահատվածը և «Թուրք-ամերիկյան բանակցությունները փաստաթղթերով» Ֆահիր Արմաօղլուի խմբագրությամբ:[9] Աղբյուրային նշանակություն ունի Թուրքիայի հայտնի քաղաքական և պետական գործիչներից մեկի՝ Թևֆիկ Ռյուշտյու Արասի 1968 թ. Ստամբուլում տպագրված «Բանակցություններս»[10] աշխատությունը:

[7] Documents on British Foreign Policy (DBFP) 1919 – 1939. First series, Vol. II, Vol. VII 1919. London, 1946

[8] Hurewitz, J. C. Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914 - 1956. Vol. II. D. Van Nostrand Company Inc., Princeton, New Jersey, New York, London, 1972

[9] Ismail Soysal. Tarihcileri ve açiklamalari ile birlikte Turkiye' nin Siyasal Andlaşmaları. I. Cilt (1920 - 1945). - Ankara, 1983; Fahir Armaoğlu. Belgelerle Türk-Amerika munasebetleri.- Ankara, 1991

[10] Tevfik Rüştü Aras. Görüşlerim. Istanbul, 1945

Ատենախոսության մեջ օգտագործվել է հայտնի թուրքագետ Ռ. Գ. Սահակյանի «Խորհրդա-թուրքական հարաբերությունների հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ»[11] աշխատությունը :

Աշխատանքում օգտագործվել են և հայտնի թուրքագետ Հ. Ս. Կորխմազյանի ուսումնասիրությունները:[12] Հեղինակը, լինելով 2-րդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերի հմուտ գիտակ, թե՛ թուրք-գերմանական, թե՛ խորհրդա-թուրքական հարաբերությունների համատեքստում մասամբ անդրադարձել է նաև Նեղուցների խնդրին:

Թուրք հեղինակների աշխատություններից առավել արժեքավոր են Ֆերիդուն Զեմալ Էրքինի, Շյուքրյու Էլեքդաղի եւ Ռիֆաթ Ուչարօլի աշխատանքները:[13]

Թուրք հեղինակների թեմայի հետ առնչվող աշխատությունների շարքում հատկապես առանձնանում է 1960-ական թթ. ԹԱՄԺ-ի (Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի) պատգամավոր Ֆերիդուն Զեմալ Էրքինի «Թուրք-խորհրդային հարաբերությունները և Նեղուցների խնդիրը» աշխատությունը: Հեղինակը 1946թ. ի վեր գործուն մասնակցություն է ունեցել Թուրքիայի Նեղուցների վերաբերյալ քաղաքականության մշակման գործում: Էրքինի աշխատությունը պարունակում է հետաքրքիր մանրամասներ, սակայն հեղինակը գերազանցապես զարգացնում է Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը: Նման տեսանկյունից են գրված և Շյուքրյու Էլեքդաղի «Գեո-ռազմավարությունից դեպի էկո-ռազմավարություն» ու Ռիֆաթ Ուչարօլի «Փոփոխվող աշխարհում թուրքական Նեղուցների կարևորությունն ու ապագան» ընդարձակ հոդվածները, որ տեղ են գտել «Նոր աշխարհակարգը և Թուրքիան» ժողովածուում: Հիշյալ աշխատություններում առաջին անգամ լրջորեն փորձեր են ձեռնարկվում գիտականորեն լուսաբանելու Նեղուցների խնդրի հետ կապված զարգացումները 1990-ական թթ. առաջին կեսին:

---

[11] Ռ. Գ. Սահակյան, Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964

[12] Р. С. Корхмазян. Турецко-германские отношения в годы второй мировой войны. - Ереван, 1977

Р. С. Корхмазян. Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав - СССР, США и Великобритании, - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր XVI, Երևան, 1996

Р. С. Корхмазян. Турция и СССР (Россия). Некоторые проблемы взаимоотношений после Второй Мировой Войны, - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր XVIII, Երևան, 1999

[13] Feridun Cemal Erkin. Dışişlerinde 34 Yıl. Anılar-Yorumlar. I. Cilt.- Ankara, 1980; Feridun Cemal Erkin. Türk-Sovyet İlişkileri ve Boğazlar Meselesi.- Ankara, 1968; Şükrü Elekdağ. Jeo Stratejinden Eko Stratejiye.- Yeni Dünya Düzeni ve Türkiye,-Istanbul, 1994; Rifat Uçarol. Değismekte olan Dünyada Türk Boğazlarının önemi ve geleceği.- Yeni Dünya Düzeni ve Türkiye.-Istanbul, 1994

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում թրքուհի ժյուլիետտա Աբրևայայի «Մոնտրեի կոնֆերանսը և Նեղուցների ռեժիմը» աշխատությունը,[14] որ հեղինակը պատրաստել էր իբրև դոկտորական ատենախոսություն և պաշտպանել այն Փարիզում 1938 թվականին: Աբրևայան փորձում է ապացուցել, որ Նեղուցների վերաբերյալ կոնվենցիայի խորհրդային նախագիծը հակասում էր Թուրքիայի շահերին, քանի որ կարող էր կոնֆլիկտի մեջ ներքաշել թուրքական կառավարությանն ագրեսորի հետ՝ Ազգերի Լիգայի կանոնադրության և ագրեսիայի դեմ փոխօգնության պակտերի հիման վրա: Աբրևայան հակված էր Մոնտրեի կոնֆերանսում անգլիական տեսակետի պաշտպանությանը և կոնֆերանսի էական ձեռքբերում էր համարում Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի մոտեցումների հաշտեցումը:

Նեղուցների խնդիրը գտնվել է նաև արևմտյան պատմագրության ուշադրության կենտրոնում: Այդ շարքում հիշատակման են արժանի Հարրի Հովարդի «Թուրքիան, Նեղուցները և Միացյալ Նահանգների քաղաքականությունը» և Ֆերենց Վալլի «Թուրքական Նեղուցները և ՆԱՏՕ-ն» աշխատությունները[15]: Թեև հիշյալ աշխատությունները մասամբ կրում են սառը պատերազմի կնիքը, սակայն արևմտյան պատմագրության մեջ գնահատվում են իբրև դասական ուսումնասիրություններ, որոնք հետազոտողների կողմից սովորաբար չեն շրջանցվում:

Խորհրդային պատմագրության մեջ Նեղուցների խնդիրը բազմիցս ուսումնասիրվել է Մ. Ն. Պոկրովսկու, Ֆ. Ա. Ռոտշտեյնի, Ե. Վ. Տարլեի, Վ. Մ. Խվոստովի, Ա. Խ. Երուսալիմսկու, Ի. Խ. Գալկինի, Մ. Պ. Պավլովիչի, Ե. Ա. Ադամովի, Ֆ. Ի. Նոտովիչի, Ա. Լ. Պոպովի և այլոց աշխատություններում: Ընդսմին, գերազանցապես ուսումնասիրվել է Նեղուցների խնդիրը Առաջին աշխարհամարտին նախորդած ժամանակահատվածում: Հետագա ժամանակաշրջանի վերաբերյալ ուսումնասիրությունների շարքում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Լոզանի կոնֆերանսին խորհրդային փորձագետի կարգավիճակով մասնակցած խոշորագույն իրավաբան-միջազգայնագետ Վ. Է. Գրաբարի և Մոնտրեի ու 1940-ական թթ. առաջին կեսի միջազգային կոնֆերանսներին խորհրդային պատվիրակության փորձագետ, անվանի թուրքագետ Ա. Ֆ. Միլլերի ուսումնասիրությունները:[16]

---

[14] Abrevaya, J. La conférence de Montreux et le régime des détroits. Paris, 1938

[15] Howard, H. Turkey, the Straits and U. S. Policy. – Baltimore and London, 1974, Vali, F. The Turkish Straits and NATO. Stanford, 1972

[16] Грабарь, В. Э. Вопрос о проливах на Лозанской конференции. Внешняя торговля, 1923, N 2, Миллер, А. Ф. Очерки Новейшей Истории Турции. Москва-Ленинград, 1948, Миллер А. Ф. Турция: Актуальные проблемы новой и новейшей истории. Москва, 1983

Այս կոնֆերանսներին հիշյալ հեղինակների անմիջական մասնակցությունը, հնարավորություն է ընձեռնել նրանց ներկայացնելու Նեղուցների խնդրի քննարկումների իրական պատկերը: Ա. Ֆ. Միլլերն առաջինն էր, որ փորձեց ներկայացնել Նեղուցների խնդիրը 1919 թ. Փարիզի կոնֆերանսից մինչև Մոնտրեն (ներառյալ): Նրա «Թուրքիայի նորագույն պատմության ուրվագծեր» աշխատությունը, բնականաբար, նվիրված է ոչ միայն Նեղուցների խնդրին: Ներառում է նաև նշված ժամանակաշրջանի Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության այլևայլ հարցեր:

Բոսֆորի և Դարդանելի շուրջ ծավալված պայքարի զանազան փուլեր ավելի մանրամասն ներկայացվել է հեղինակի զանազան հոդվածներում ու դասախոսություններում, որոնք ի մի են բերվել 1983 թ., տպագրված «Թուրքիա. նոր և նորագույն պատմության ակտուալ հիմնախնդիրները» աշխատության մեջ: Նեղուցների խնդիրը մեր օրերում ևս շարունակում է մնալ ռուս պատմաբանների ուշադրության կենտրոնում: Այդ առումով հատկապես հիշատակման է արժանի Տ. Վ. Լավրովայի «Սևծովյան Նեղուցները» աշխատությունը՝ տպագրված 1997 թ.:[17] Ճիշտ է, ուսումնասիրության մեջ շրջանցվել են թուրքալեզու աղբյուրներն ու թուրք հեղինակների ուսումնասիրությունները, բայց այն արժանի է գնահատության իբրև առաջին փորձ ներկայացնելու նաև 1990-ական թվականների զարգացումները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունն իրականացվել է Նեղուցների հիմնախնդիրների վերաբերյալ առաջ քաշված բազմաթիվ հարցադրումների և կարծիքների պատմաքննական մեկնության ու սկզբնաղբյուրների համեմատական-համադրական վերլուծության հիմամբ: Նորովի մեկնաբանման և նոր հարցադրումներին ու պատասխաններին հետամուտ՝ կիրառվել է համալիր հետազոտման մեթոդը:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Ուսումնասիրության թեման ունի սկզբունքային քաղաքական և գործնական նշանակություն, քանզի Միջազգային ծովային կազմակերպության և հատկապես ռուս-թուրքական հարաբերությունների շրջանակներում Նեղուցների խնդրի նույնիսկ ներկայիս քննարկումների ընթացքը հնարավոր չէ միայն 1936 թ. Մոնտրեի կոնվենցիայի և 1994թ. կանոնակարգի

[17] Лаврова, Т. В. Черноморские проливы. – Ростов-на-Дону, 1997

փաստաթղթերի դիտարկումով: Անհրաժեշտ է ընդգծել նեղուցների խնդրի քննարկումների և դրանց վերաբերյալ ընդունված կոնվենցիաների տրամաբանությունը, մոտեցումների տրանսֆորմացիան, առավել ևս, որ հիշյալ խնդիրը ոչ այնքան իրավատնտեսական, որքան քաղաքական բնույթ է կրել: Ատենախոսության մեջ արված մեկնաբանություններն ու եզրահանգումները, ինչպես նաև փաստական նյութերը լայնորեն կարող են օգտագործվել Թուրքիայի նորագույն պատմության և նեղուցների իրավական ռեժիմի որոշակի հիմնախնդիրների ուսումնասիրության գործում: Ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ նորագույն պատմության ընթացքում մեծ տերությունների և Թուրքիայի արտաքին քաղաքականության պատմության ուսումնասիրության, ինչպես նաև նորագույն պատմության և միջազգային հարաբերությունների պատմության դասախոսությունների համար:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ներկայացվող ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԿԳՆ ՀՊՄՀ Պատմության ֆակուլտետի ընդհանուր պատմության ամբիոնում և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնում:Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար ունի իր ենթաբաժինները), վերջաբանից, ծանոթագրություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Նախաբանի մեջ խոսվում է ատենախոսության արդիականության, նպատակների և խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված գրականության և աղբյուրների համառոտ տեսությունը, մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

Առաջին գլուխը՝ «Առաջին աշխարհամարտի ավարտը և Սևծովյան նեղուցների խնդիրը 1918-1936թթ.» անդրադառնում է Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում Նեղուցների հիմնախնդրին անմիջականորեն առնչվող իրադարձություններին և Նեղուցների կանոնակարգի կարգավորման հիմնական

փուլերին. Փարիզի հաշտության կոնֆերանս, Լոզանի կոնֆերանս և Մոնտրեի կոնֆերանս:

Գլխի *առաջին ենթագլխում՝* «Առաջին աշխարհամարտի ավարտը և Նեղուցների խնդիրը. Սևր և Լոզան» ներկայացվում է Թուրքիայի տարածքային բաժանման համատեքստում Նեղուցները վերահսկելու շուրջ հաղթանակած տերությունների դիվանագիտությունը և նրանց միջև եղած հակասությունները Փարիզի կոնֆերանսում:

1920թ. օգոստոսի 10-ին ստորագրվում է Սևրի հաշտության պայմանագիրը: Պայմանագիրը մանրամասնորեն անդրադառնում էր Կոստանդնուպոլսի և Նեղուցների խնդրին: Կոստանդնուպոլիսը մնում էր Թուրքիային պայմանականորեն՝ պայմանագրի «լոյալ» կատարման պարտավորությամբ: Հայտարարվում էր Նեղուցներով բաց նավագնացության սկզբունքը բոլոր առևտրանավերի և ռազմանավերի համար՝ առանց դրոշի տարբերակման: Թուրքիան պարտավորվում էր հաղթող երկրներին հանձնել իր ռազմական նավատորմի մեծագույն մասը, ինչպես նաև վերացնել ամրությունները Նեղուցների և կղզիների հատվածում: Նեղուցների գոտում նավագնացության կարգի վերահսկման նպատակով նախատեսվում էր ստեղծել Միջազգային հանձնաժողով, որում գերակայելու էին Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Սակայն Սևրի պայմանագիրը մնաց թղթի վրա:

Ավելի ուշ՝ 1923 թ. հուլիսին պետք է ընդունվեր Սևծովյան նեղուցների վերաբերյալ Լոզանի կոնվենցիան: Այն նախատեսում էր բոլոր երկրների առևտրանավերի ու ռազմանավերի ազատ անցումը խաղաղ ու պատերազմական ժամանակներում, ինչպես նաև Բոսֆորի ու Դարդանելի ապառազմականացումը: Կոնվենցիայի իրագործման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով ստեղծվում էր Միջազգային հանձնաժողով շտաբ կայանով՝ Կոստանդնուպոլսում և թուրք ներկայացուցչի գլխավորությամբ: Ինչ վերաբերում է խորհրդային կառավարությանը, ապա այն ստորագրեց կոնվենցիան, սակայն հետագայում չվավերացրեց:

Երկրորդ ենթագլխում՝ «Մոնտրեի կոնֆերանսը և Նեղուցների կանոնակարգի վերաբերյալ կոնվենցիան» ներկայացվում են փոփոխվող միջազգային իրադրության ազդեցությունները Նեղուցների խնդրի վրա, այդ համատեքստում Թուրքիայի Հանրապետության նկատմամբ արևմտյան երկրների դիրքորոշման վերափոխումները և Թուրքիայի վարած փոփոխական արտաքին քաղաքականությունը: Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը փլուզվում էր և նման բարենպաստ իրավիճակից օգտվելով է, որ Թուրքիան կարողացավ ապահովել Նեղուցների վերաբերյալ Լոզանի կոնվենցիան վերանայելու թուրքական նախաձեռնության նկատմամբ շահագրգիռ մյուս տերությունների դրական արձագանքը:

1936թ. հունիսի 22-ին բացվեց Նեղուցների վերաբերյալ Լոզանի կոնվենցիան վերանայելու նպատակով գումարված Մոնտրեի կոնֆերանսը: Կոնֆերանսն իր աշխատանքներն ավարտեց 1936 թ. հուլիսի 20-ին՝ Նեղուցների վերաբերյալ Մոնտրեի կոնվենցիայի կնքումով: Համաձայն կոնվենցիայի Թուրքիան ստանում էր Նեղուցների գոտին վերստին ռազմականացնելու իրավունք: Լոզանի կոնվենցիայի դրույթների համաձայն ստեղծված Միջազգային հանձնաժողովը լուծարվում էր: Հռչակվում էր Նեղուցներով անցման և նավագնացության ազատության սկզբունքը: Առևտրանավերի դեպքում ազատությունը լիակատար էր, ռազմանավերի դեպքում, սակայն, տարբերակում էր մտցվում սևծովյան և ոչ սևծովյան տերությունների միջև:

Նեղուցները տնօրինելու և դրան համապատասխան Նեղուցներով տերությունների նավատորմերի անցումը վերահսկելու իրավունքը տրվում էր թուրքական կառավարությանը: Սակայն կոնվենցիան լիովին չէր պաշտպանում սևծովյան տերությունների օրինական իրավունքները և բավարար չափով չէր ապահովում վերջիններիս անվտանգությունը՝ հատկապես պատերազմական ժամանակներում: Այդուհանդերձ Մոնտրեի կոնվենցիայի ստորագրումը Թուրքիայի համար զգալի առաջընթաց էր՝ Լոզանի կոնվենցիայի համեմատությամբ:

Ատենախոսության *երկրորդ գլուխը՝* «Մոնտրեի կոնվենցիայի վերանայման խնդիրը և Նեղուցների շուրջ քննարկումները 1936-1946 թթ.» քննարկում է եվրոպական քաղաքականության մեջ առաջատար տերությունների կողմից Մոնտրեի կոնվենցիան վերանայելու և այն իրենց ռազմավարական մոտեցումներին համապատասխանեցնելու փորձերը: Ներկայացվում է նաև Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի աջակցությունն ապահովելու նպատակով մեծ տերությունների միջև ծավալված պայքարը և Թուրքիայի վարած չեզոքության քաղաքականությունն իր տատանումներով:

Գլխի *առաջին ենթագլխում՝* «Սևծովյան նեղուցների խնդրի քննարկումները 1936-43 թթ.» ներկայացվում են Մոնտրեի կոնվենցիայի կանոնակարգի կամ նրա որոշակի մասի վերանայման և լրացման շուրջ Խորհրդային Միության մոտեցումները: Նեղուցների կարգավիճակի վերաբերյալ նոր խորհրդա-թուրքական պայմանագրի հեռանկարը Մեծ Բրիտանիայի կողմից ընկալվում էր իբրև սպառնալիք Միջերկրական

ծովի շրջանում իր դիրքերի դեմ: Ընդսմին, անգլիական կողմը ամեն ինչ արեց բացառելու համար խորհրդա-թուրքական պայմանագրի կնքումը: Միաժամանակ դա փորձ էր Թուրքիային ներքաշելու իր արտաքին քաղաքականության ուղեծիր: Թուրքական կողմի դիրքորոշման վրա նաև մեծապես ազդում էին Եվրոպայում քաղաքական իրադրության սրման միտումները:

Քննարկվում է նաև Անգլո-ֆրանս-թուրքական փոխօգնության վերաբերյալ պայմանագիրը, Իտալիայի Միջերկրականի արևելյան ավազանում վարած քաղաքականությունը և իտալական կողմի Խորհրդային Միության հետ տարածաշրջանային քաղաքականության մեջ ընդհանուր հայտարարի գալու միտումները: Վերջիններս, ինչպես հայտնի է, չստացան վերջնական ձևակերպում ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև Բալկանների հարցում առկա հակասությունների պատճառով: Եվ այդ հակասություններն էին, որ թույլ չտվեցին Խորհրդային Միությանը միանալու Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի միջև կնքված եռյակ պակտին:

Սույն ենթագլխում ներկայացվում է նաև գերմանական կողմի դիրքորոշումը Մոնտրեի կոնվենցիայի նկատմամբ: Չլինելով կոնվենցիայի անդամ, նրանք ձգտում էին Թուրքիայից երաշխիքներ ստանալ այն մասին, որ Մոնտրեի կոնվենցիայի որոշ հոդվածներ չեն օգտագործվի իրենց դեմ: Թուրքիան ձգտում էր խուսափել ցանկացած քայլից, որ կարող էր առաջ բերել Իտալիայի և Գերմանիայի դժգոհությունը: Այդուհանդերձ, 1930-ական թվականների երկրորդ կեսին Իտալիայի և Գերմանիայի ծավալապաշտական քաղաքականությունն ուղեկցվում էր Անգլիայի և Ֆրանսիայի հետ Թուրքիայի մերձեցմամբ՝ Խորհրդային Միության հետ վերջինիս բարեկամական հարաբերությունների պահպանումով հանդերձ: Թեև Թուրքիան ձգտում էր պահպանել բնականոն հարաբերություններ նաև Գերմանիայի և Իտալիայի հետ, այդուհանդերձ մտավախություններ ուներ Բալկաններում, Հյուսիսային Աֆրիկայում և Ասիայում վերջիններիս հավակնությունների հետ կապված:

Գերմանա-խորհրդային պատերազմի ընթացքում կրկին կարևորվեց Նեղուցների խնդիրը: Հօգուտ ֆաշիստական երկրների Թուրքիան կամ շրջանցում էր կոնվենցիայի համապատասխան կետերը՝ յուրովի մեկնաբանելով դրանք, կամ բացահայտորեն խախտում դրանք: Այսպիսով Գերմանիան իր հայեցողությամբ տնօրինում էր Նեղուցները, իսկ Խորհրդային Միությունը հանդես էր գալիս բողոքներով, որոնք սկսեցին Թուրքիային մտահոգել միայն Ստալինգրադից հետո:

Սույն գլխի *երկրորդ ենթագլխում* «Նեղուցների խնդիրը մեծ տերությունների օրակարգում 1943-1945 թթ.» պարզաբանվում է Թեհրանի կոնֆերանսից սկսած Նեղուցների խնդրի նկատմամբ Խորհրդային Միության և դաշնակիցների դիրքորոշումները: Քննարկվում է նաև դաշնակիցների կողմից Թուրքայի վրա գործած ճնշումները՝ Մոնտրեի կոնվենցիայի դրույթներին հետևելու պահանջով: Թուրքիայից պահանջում էին նաև խզել դիվանագիտական և տնտեսական հարաբերությունները Գերմանիայի հետ:

Ֆաշիստական բլոկի երկրների նկատմամբ հակահիտլերյան կոալիցիայի հաղթանակին զուգընթաց կարծրանում էր Թուրքիայի նկատմամբ ԽՍՀՄ-ի դիրքորոշումը՝ Նեղուցների խնդրի արմատական լուծման պահանջով: 1943-1945 թթ. «մեծ եռյակի» հանդիպումներում Չերչիլը և Ռուզվելտը սկզբունքորեն համաձայն էին Նեղուցներով նավագնացության Մոնտրեում հաստատված կանոնակարգում որոշակի փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության հետ: Սակայն նրանց դիրքորոշումները չէին համապատասխանում խորհրդային պահանջներին: Դրանք միտված էին Նեղուցների նկատմամբ խորհրդային կողմի գերակայությունը հաստատելուն:

Ատենախոսության *երրորդ գլուխը՝* «Նեղուցների խնդիրը Սառը պատերազմի տարիներին և Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում (1946-1990 թթ.)» քննարկում է նեղուցների խնդրի շուրջ 1946 թ. տերությունների միջև հայտագրերի փոխանակման և դիրքերի հստակեցման գործընթացը: Այն ընթանում էր Թուրքիայի ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ մերձեցմամբ և ԽՍՀՄ-ի հետ, ընդհակառակը հարաբերությունների սառեցմամբ: Այնուհետև ներկայացվում է Թուրք-խորհրդային հարաբերությունների դինամիկան սառը պատերազմի տարիներին և Խորհրդային Միության փլուզումից հետո Նեղուցների շուրջ ձևավորված նոր իրավիճակը:

Առաջին ենթագլխում՝ «1946 թ. խորհրդա-թուրքական հայտագրերի փոխանակումը և մեծ տերությունների միջև տարաձայնությունների խորացումը», անդրադարձ է կատարվում 1946 թ. օգոստոսի 7-ի և սեպտեմբերի 24-ի Խորհրդային Միության՝ Նեղուցների կանոնակարգի վերաբերյալ Թուրքիային ուղղված հայտագրերին: Դրանում խորհրդային կողմը մեղադրում էր թուրքական կողմին պատերազմի ընթացքում Մոնտրեի կոնվենցիայի դրույթների խախտման մեջ և առաջարկում էր ձևավորել նոր կանոնակարգ, որի համաձայն Թուրքիան և ԽՍՀՄ-ը պետք է համատեղ իրականացնեին Նեղուցների պաշտպանությունը:

Թուրքական կողմը (որին աջակցում էին Անգլիան ու ԱՄՆ-ը) իր պատասխան հայտագրերում չէր հերքում կոնվենցիայի դրույթների խախտման փաստերը, բայց ձգտում էր ապացուցել, որ այդ խախտումները իրականում Խորհրդային Միության համար սպառնալիք չէին ներկայացրել: Թուրքիան մերժում էր խորհրդային առաջարկները և պատրաստ էր Մոնտրեի կոնվենցիան վերանայելու՝ ստորագրած բոլոր երկրների (բացառությամբ Ճապոնիայի) և ԱՄՆ-ի մասնակցությամբ: Խորհրդային Միությունն էլ, հաշվի առնելով, որ նման կոնֆերանսում կհայտնվի փոքրամասնության մեջ, շահագրգռված չէր դրա հրավիրմամբ, և ձգտում էր հարցը լուծել թուրքական կառավարության վրա ուղղակի ճնշմամբ:

Սույն գլխի *երկրորդ ենթագլխում* «Նեղուցների խնդիրը խորհրդա-թուրքական հարաբերությունների համատեքստում 1950-1990-ական թթ.» անդրադարձ է կատարվում Սևծովյան նեղուցների խնդրի կարևորությանը ԽՍՀՄ արտաքին քաղաքականության շրջանակներում, ներկայացվում է Խորհրդային միության Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը Ստալինի մահվանից հետո: Ներկայացվում է երկու երկրների միջև համագործակցությանը խոչընդոտող հանգամանքները՝ տնտեսական և քաղաքական ոլորտներում: Թուրքիան դարձել էր ՆԱՏՕ-ի անդամ և իր հարաբերությունները Խորհրդային Միության հետ կառուցում էր այդ համատեքստում: Խորհրդային Միությունում դժգոհություն էին առաջացնում Թուրքիայի դաշնակիցների ռազմական նավատորմերի հաճախակի այցելությունները Նեղուցների գոտի: Նատոյական կողմն իր հերթին դժգոհում էր խորհրդային ծանր ավիակիր հածանավերի Նեղուցներով անցման փաստերի առնչությամբ: Սառը պատերազմից հետո՝ 1990-ական թթ. կեսերին Ռուսաստանի Դաշնության և Թուրքիայի միջև ծագեցին տարաձայնություններ կապված Թուրքիայի կողմից 1994 թ. հուլիսի 1-ին Նեղուցների գոտում նավագնացության նոր կանոնակարգ շրջանառության մեջ դնելու հետ:

Վերջաբանում ամփոփվում է աշխատանքի հիմնական արդյունքները և եզրակացությունները: Ատենախոսության մեջ արձանագրվում է.

- Սևծովյան նեղուցների ներկայիս կարգավիճակը հիմնականում 20-րդ դարում հիշյալ խնդրի շուրջ մեծ տերությունների քննարկումների և ստորագրված կոնվենցիաների արդյունք է:
- Սևծովյան նեղուցներով նավագնացության անհրաժեշտությունը ոչ թե նվազել, այլ աճել է:

- Թուրքիան Նեղուցների խնդրի հետ կապված հաճախ պաշտպանվողի դերում էր, ժամանակ առ ժամանակ հայտարարելով իր՝ իբրև Նեղուցների միակ խնամակալի հատուկ իրավունքների մասին:
- Ռուսաստանը, ցանկացած համակարգի պայմաններում, Սևծովյան նեղուցների խնդրում ցուցադրել է առանձնահատուկ ակտիվություն՝ «Ցարգրադի բանալիներին տիրանալու» ռուս իշխանների և կառավարողների չիրականացած երազանքներից ու փորձից մինչև Նեղուցների հետ կապված քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և ռազմական հարցերի բարդ հանգույցը լուծելու անհրաժեշտությունը մեր օրերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Առաջին աշխարհամարտի ավարտը և Սևծովյան նեղուցների խնդիրը 1918-1923թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, 2004թ., թիվ 1, էջ 187-195
2. Նեղուցների հարցի միջազգային և իրավական կարգավորումը, ՀՊՄՀ ժողովածու, 2-րդ պրակ, 2004թ., էջ 47-52
3. Մոնտրեի կոնֆերանսը և Սևծովյան նեղուցների կանոնակարգի կարգավորումը, 2004թ., «Մանկավարժ», 62 էջ
4. Սևծովյան նեղուցների խնդիրը սառը պատերազմի սկզբում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2004թ., թիվ 2, էջ 160-170

Гаспарян Ара

Урегулирование проблемы Черноморских проливов в 1920-1990 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – "Всеобщая история".
Защита состоится 24 февраля 2005 года по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24г , Институт востоковедения, НАН РА.

Резюме

При выборе темы исследования автор диссертации стремился осветить суть и историю проблемы Черноморских проливов. Настоящая работа по своему содержанию, объему и вопросам исследования является первой попыткой в армянской ориенталистике отобразить эволюцию проблемы проливов. Значимость работы состоит в использовании нового научного подхода к проблеме.

Диссертация состоит из введения, трех глав, каждая из которых состоит из соответствующих подглав, заключения, примечаний и списка использованных источников и литературы.

Введение рассматривает современность проблемы, цели и предметы исследования диссертации, объясняет практическую значимость работы, предоставляет краткий обзор использованной литературы и источников, методологию и научную новизну работы.

Первая глава "Конец первой мировой войны и проблема Черноморских проливов в 1918-1936 гг." описывает события, непосредственно связанные с проблемой проливов в период между двумя мировыми войнами, и основные этапы урегулирования уставных норм Черноморских проливов: Парижская мирная конференция, Лозаннская конференция и Монтре конференция.

Вторая глава диссертации "Вопрос пересмотра конвенции Монтре и дискуссии вокруг проливов в 1936-1946гг." обсуждает попытки великих держав европейской политики пересмотреть конвенцию Монтре и приспособить ее к своим стратегическим подходам. Она также описывает борьбу основных держав за турецкую поддержку в первой мировой войне и политику нейтралитета, проводимую Турцией.

Третья глава диссертации "Проблемы проливов во время и после холодной войны (1946-1990гг.)" исследует процесс обмена дипломатическими нотами между великими державами в 1946 году и проясняет их позиции относительно проблемы

проливов. Этот процесс сопровождался сближением США и Великобритании с Турцией и одновременным охлаждением отношений с СССР. Далее она описывает динамику турецко-советских отношений во время холодной войны и новую ситуацию, сложившуюся вокруг Черноморских проливов в связи с распадом Советского Союза.

В заключении автор диссертации, суммируя основные результаты работы, заключает, что теперешний статус Черноморских проливов является результатом дискуссий относительно отмеченной проблемы и подписанных конвенций между основными державами в XX веке. Опыт двух мировых войн демонстрирует, что контроль и господство над проливами не является гарантией победы, а только одним компонентом громадного комплекса, состоящего из военного, политического и экономического факторов.

Комментарии и выводы, сделанные в диссертации, а также фактические материалы могут быть широко использованы во время исследований новейшей истории Турции и некоторых проблем правовых базисов проливов. Диссертация может рассматриваться как основание для исследования истории внешней политики Турции и великих держав во времена новейшей истории и использована для лекций по новейшей истории и истории международных отношений.

Gasparyan Ara

Settlement of the problem of the Black Sea Straits in 1920-1990s

Dissertation for the Scientific Degree of Candidate of Historical Sciences,
Specialty 07.00.02 – "World History."
The defense will take place on February 24, 2005 at the following address:
375019 Yerevan, Baghramian 24g, Institute of Oriental studies, NAS RA.

Summary

While choosing the topic of the study the author of the dissertation aimed at clarifying the essence and history of the problem of the Black Sea straits.

The current work by its content, volume and research questions is the first attempt in Armenian orientalism to reflect the evolution of the problem of the Straits. The work is important for its new scientific approach to the problem.

The dissertation consists of the introduction, three chapters (each of which has its sub-chapters correspondingly), conclusion, annotations and references of used sources and literature.

The introduction presents the contemporaneity, objectives and issues of the dissertation, explains the practical significance of the work, provides the brief review of the used literature and sources, the methodology and the scientific novelty.

The first chapter "End of the World War One and Problem of the Black Sea straits in 1918-1936s" reveals the events directly related to the problem of the Straits during the time period between the World War One and World War Two and to the main stages of the regulation of the by-laws of the Straits: Paris Peace conference, Lausanne conference and Montreux conference.

The second chapter of the dissertation "Issue of reconsideration of Montreux Convention and deliberations over the Straits in 1936-1946s" discusses the attempts of the primary powers in the European politics to revise the Montreux Convention and to adjust it to their strategical approaches. It presents also the struggle led by the main powers to ensure the support of Turkey during the World War One and the politics of neutrality with hesitations carried on by Turkey.

The third chapter of the dissertation "Problem of the Straits during and after the Cold War (1946-1990s)" examines the process of the interchange of notes in 1946 on the problem of the Straits between the powers and clarification of their positions over the issue. This process is accompanied by the convergence of the USA and the Great Britain with Turkey, while freezing the relationships with the USSR. Later it reveals the dynamics of the Turk-Soviet relationships during

the years of the Cold War and the new situation around the Straits that appeared after the collapse of the Soviet Union.

In the conclusion the author of the dissertation, while summarizing the main results of the work, concludes that the current status of the Black Sea straits is the result of the deliberations over the mentioned problem and of the signed conventions between the main powers mainly in the 20th century. The experience of both World Wars shows that the control and dominance over the Straits is not the warranty of the victory but just one of the components of the huge complex that consists of military, political and economic factors.

The commentaries and conclusions made in this dissertation as well as the factual materials can be widely used during the study of the newest history of Turkey and of some problems of the legal basis of the Straits. The dissertation can be considered a basis of the study of the history of the external politics of Turkey and of the big powers during the newest history as well as used for the lectures of the newest history and of the history of the international relations.